ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 31.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/90

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև բողոքներ քննող անձը) քննելով «ԷյԴիՎի Մեդիա ԷՍ» ՍՊԸ-ի կողմից 24.07.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **<u>«ԷյԴիՎի Մեդիա ԷՍ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«ԷյԴիՎի Մեդիա ԷՍ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 24.07.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է ԵՔ-ԲՄԾՁԲ-18/111 ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկա է հանդիսանում՝ Երևանի հիմնադրման 2800 ամյակին նվիրված «Էրեբունի-Երևան» տոնակատարության շրջանակում մշակութային միջոցառումների իրականացման ծառայությունները:

Ընթացակարգին մասնակցության հայտեր են ներկայացվել «ԷյԴիՎի Մեդիա ԷՍ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն), «ԻՆՎԻՏՐՈ ՊՐՈԴԱԿՇՆ» ՍՊԸ և «ՄԱԵՍՏՐՈ ՊՐՈԴԱԿՇՆ» ՍՊԸ (կոնսորցիում) և «Սթեյջ Դիզայն» ՍՊԸ-ի կողմից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.07.2018թ ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 5-րդ կետով կայացվել է որոշում «ԷյԴիՎի Մեդիա ԷՍ» ՍՊԸ-ին 1-ին տեղ և «ԻՆՎԻՏՐՈ ՊՐՈԴԱԿՇՆ» ՍՊԸ և «ՄԱԵՍՏՐՈ ՊՐՈԴԱԿՇՆ» ՍՊԸ (կոնսորցիում) 2-րդ տեղ զբաղեցնող ճանաչելու վերաբերյալ:

«Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձան՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ հարցում է ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.07.2018թ ժամը 10:20-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով արձանագրվել է, որ Կոմիտեի կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված չափը, և կայացվել է որոշում Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումը.

Ընկերության հայտը մերժվել է ԵՔ-ԲՄԾՁԲ-18/111 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 44-րդ կետի պահանջները, այն է՝ եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Ընկերությունը տրամադրել է տեղեկատվություն, համաձայն որի 10.07.2018 թվականի N 000187 վճարման հանձնարականով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի միջոցով՝ մինչև Ընթացակարգի մասնակցության հայտը ներկայացնելը, իրականացրել է իր հարկային պարտավորության կատարումը:

Համաձայն կարգի 67-րդ կետի՝ գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Համապատասխան հարցման գրավոր եզրակացություն դեպքում ակնհայտ կլիներ, որ Ընկերությունը սահմանված ժամկետում՝ 10.07.2018թ. (հայտը ներկայացնելուն օրը) կատարել է իր հարկային պարտավորության վճարումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Ընկերությունը չի ներկայացրել իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն, ուստի տվյալ հիմքով հայտը ենթակա չէ մերժման:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձից խնդրում եմ՝

1.Պարտավորեցնել ԵՔ-ԲՄԾՁԲ-18/111 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 18.07.2018թ ժամը 10:20-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով Ընկերության հայտը մերժելու մասին կայացրած որոշումը:

2.Պարտավորեցնել ԵՔ-ԲՄԾՁԲ-18/111 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 18.07.2018թ ժամը 10:20-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետով «ԻՆՎԻՏՐՈ ՊՐՈԴԱԿՇՆ» ՍՊԸ և «ՄԱԵՍՏՐՈ ՊՐՈԴԱԿՇՆ» ՍՊԸ Կոնսորցիումը Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին կայացրած որոշումը:

3.Պարտավորեցնել ԵՔ-ԲՄԾՁԲ-18/111 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում Ընկերության հայտը բավարար գնահատելու մասին»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «ԷյԴիՎի Մեդիա ԷՍ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչներ Սեյրան Հարությունյանը և Հայկ Ղազարյանը:

2. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «ԷյԴիՎի Մեդիա ԷՍ» ՍՊԸ-ի կողմից 24.07.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 26.07.2018թ. թիվ 01/61-16826 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/111» ծածկագրով բաց մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ԷյԴիՎի Մեդիա ԷՍ» ՍՊԸ-ն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում է ներկայացվել պետական եկամուտների կոմիտե առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ: ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է տեղեկատվություն, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա՝ 10. 07.2018թ. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված շեմը:

Հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետի պահանջը՝ գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում եմ, որ գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումն իրավաչափ է և խախտում առկա չէ»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Անի Համբարձումյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/90 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ԷյԴիՎի Մեդիա ԷՍ» ՍՊԸ-ի կողմից 24.07.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/111» ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/111» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 11.07.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3, 05.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4, 29.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 5, 18.07.2018թ. ժամը 10:20-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունները, «ԷյԴիՎի Մեդիա ԷՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի պատճենը, Պատվիրատուի 26.07.2018թ. թիվ 01/61-16826 գրությամբ հայտնած դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/111» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) 10.07.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել «ԷյԴիՎի Մեդիա ԷՍ» ՍՊԸ-ն:

«ԷյԴիՎի Մեդիա ԷՍ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/111» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովի 11.07.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետի համաձայն՝ «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/111» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «ԷյԴիՎի Մեդիա ԷՍ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկը կազմել է 138,480,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), իսկ «ԻՆՎԻՏՐՈ ՊՐՈԴԱԿՇՆ» ՍՊԸ և «ՄԱԵՍՏՐՈ ՊՐՈԴԱԿՇՆ» ՍՊԸ (կոնսորցիում) կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 219,000,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ): Նույն կետի համաձայն՝ Ընթացակարգի նախահաշվային գինը կազմել է 230,000,000 ՀՀ դրամ:

Նույն արձանագրության՝

- 5-րդ կետով Հանձնաժողովը որոշել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/111» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «ԷյԴիՎի Մեդիա ԷՍ» ՍՊԸ-ին՝ որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից,

իսկ 2-րդ տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «ԻՆՎԻՏՐՈ ՊՐՈԴԱԿՇՆ» ՍՊԸ և «ՄԱԵՍՏՐՈ ՊՐՈԴԱԿՇՆ» ՍՊԸ (կոնսորցիում):

-6.1 կետով Հանձնաժողովը որոշել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 17.07.2018թ. տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «ԷյԴիՎի Մեդիա ԷՍ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա՝ 10.07.2018թ. դրությամբ, ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 135,511 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Հանձնաժողովը 17.07.2018թ. նիստի թիվ 7 արձանագրության 1.2 կետով արձանագրել է, որ ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ներկայացված եզրակացության, «ԷյԴիՎի Մեդիա ԷՍ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված շեմը: Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը որոշել է «ԷյԴիՎի Մեդիա ԷՍ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

«ԷյԴիՎի Մեդիա ԷՍ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է, որ հայտը ներկայացնելու օրը՝ 10.07.2018թ. Ընկերությունը կատարել է իր հարկային պարտավորությունները՝ 300,000 ՀՀ դրամի չափով գումար մուտքագրելով հարկերի միասնական հաշվին, որից հետո միայն ներկայացրել է հայտը: Սակայն, ավելի ուշ՝ 18.07.2018թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից Ընկերությանը տրամադրած թիվ 1623 գրությունից պարզվել է, որ Ընկերության կողմից 10.07.2018թ. կատարված 300,000 վճարումը ՀՀ կենտրոնական բանկի կողմից միասնական գանձապետական հաշին հաշվեգրվել է 11.07.2018թ., և այդ օրվա դրությամբ Ընկերությունն ունի միասնական հաշվում առկա ավել վճարված 43,404 ՀՀ դրամ գումար:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչն ընդունեց Ընկերության կողմից ներկայացված փաստարկների հիմնավորվածությունը՝ միևնույն ժամանակ նշելով, որ գնահատող հանձնաժողովի կողմից «ԷյԴիՎի Մեդիա ԷՍ» ՍՊԸ-ի հայտը մերժելու որոշումը համապատասխանել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին,

քանի որ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի՝ Կարգի 44-րդ կետով նախատեսված եզրակացության համաձայն՝ «ԷյԴիՎի Մեդիա ԷՍ» ՍՊԸ-ն հայտը ներկայացվելու օրվա դրությամբ, ունեցել է 135,511 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Բողոքի քննության շրջանակներում Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրեց.

- Ընկերության կողմից 10.07.2018թ. «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի միջոցով՝ հարկային պարտավորությունների կատարման նպատակով, հարկերի միասնական հարկային հաշվին մուտքագրված 300,000 ՀՀ դրամի չափով բյուջետային փոխանցման N 000187 վճարման անդորրագիրը:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից «ԷյԴիՎի Մեդիա ԷՍ» ՍՊԸ-ին տրված՝ «Մնացորդների վերաբերյալ» տեղեկանքն առ այն, որ Ընկերությունը 11.07.2018թ. դրությամբ հարկային որևէ պարտավորություն չի ունեցել:

- 18.07.2018թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից Ընկերությանը տրամադրած թիվ 1623 գրությունը, համաձայն որի՝ Ընկերության կողմից 10.07.2018թ. կատարված 300,000 վճարումը ՀՀ կենտրոնական բանկի կողմից միասնական գանձապետական հաշին հաշվեգրվել է 11.07.2018թ., և այդ օրվա դրությամբ Ընկերությունն ունի միասնական հաշվում առկա ավել վճարված 43,404 ՀՀ դրամ գումար:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.

- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության

կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

• 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«ԵՔ-ԲՄԾՁԲ-18/111» ծածկագրով բաց մրցույթի հրավերի՝

• 8.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 8.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի

գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում սույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am, էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 8.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 8.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում սույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Նույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն հրավերի 1-ին մասի 8.20 կետի 2-րդ ենթակետով նախատեսված ընթացակարգը:

• 8.16 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով

ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Նույն հրավերի 8.15-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում նույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Նույն կետով նախատեսված լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 18-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված է, որ հարկի (այդ թվում՝ կանխավճարի), տույժի և (կամ) տուգանքի վճարումը համարվում է կատարված վճարողին սպասարկող բանկի վճարման հանձնարարականի հիման վրա Հայաստանի Հանրապետության կետրոնական բանկի կողմից միասնական գանձապետական հաշվին գումարի հաշվեգրման օրը:

Օրենսգրքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորության կատարում (մարում) է համարվում Օրենսգրքին համապատասխան հաշվարկված՝ վճարման ենթակա հարկի, ինչպես նաև դրա գծով

տույժերի և (կամ) տուգանքների գումարների հաշվեգրումը միասնական հաշվից համապատասխան հարկի գծով պարտավորությունը հաշվառող՝ պետական բյուջեի գանձապետական հաշվին:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 17.07.2018թ. տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «ԷյԴիՎի Մեդիա ԷՍ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա՝ 10.07.2018թ. դրությամբ, ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 135,511 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

- Հարկային պարտավորությունները կատարելու նպատակով՝ Ընկերությունը 10.07.2018թ. հարկերի միասնական հաշվին մուտքագրել է 300,000 ՀՀ դրամի չափով գումար:

- Ընկերության կողմից 10.07.2018թ. կատարված վճարումը հարկերի միասնական հաշվին հաշվեգրվել է 11.07.2018թ.:

- 18.07.2018թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից Ընկերությանը տրամադրած թիվ 1623 գրության համաձայն՝ 11.07.2018թ. դրությամբ Ընկերությունն ունի միասնական հաշվում առկա ավել վճարված 43,404 ՀՀ դրամ գումար:

Վերոգրյալով պայմանավորված և հաշվի առնելով, որ նույն օրը՝ մինչև հայտը ներկայացնելը, Ընկերության կողմից կատարվել է հարկային պարտավորությունների մարմանն ուղղված վճարումը, սակայն հարկերի միասնական հաշվից հարկային պարտավորությունների մարումները կատարվել են միայն 11.07.2018թ., այսինքն, ավելի ուշ, քան Ընկերության կողմից վճարում կատարելը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ նշված հանգամանքներում Ընկերության ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության փաստը չպետք է դիտարկվի որպես Ընկերության կողմից հարկային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման արդյունք:

Միաժամանակ, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հանձնաժողովը՝ «ԷյԴիՎի Մեդիա ԷՍ» ՍՊԸ-ի հայտը մերժելով՝ գործել է իրավաչափ՝ ապահովելով Կարգի 44-րդ կետով սահմանված պահանջների կատարումը:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն դիտարկմանը, որ, հիմք ընդունելով Կարգի 67-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը կարող էր ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա

մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը, ինչի արդյունքում կպարզվեր, որ Ընկերությունը սահմանված ժամկետում՝ հայտը ներկայացնելուն օրը, կատարել է իր հարկային պարտավորության վճարումը, ապա Բողոքներ քննող անձը գտնում է, որ այն անհիմն է, քանի որ Հրավերի 8.16 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ԷյԴիՎի Մեդիա ԷՍ» ՍՊԸ-ի կողմից 24.07.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/111» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ 18.07.2018թ ժամը 10:20-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով Ընկերության հայտը մերժելու մասին կայացրած որոշումը դադարեցնելու վերաբերյալ համապատասխան որոշում:

3. Պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/111» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ 18.07.2018թ ժամը 10:20-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետով «ԻՆՎԻՏՐՈ ՊՐՈԴԱԿՇՆ» ՍՊԸ և «ՄԱԵՍՏՐՈ ՊՐՈԴԱԿՇՆ» ՍՊԸ Կոնսորցիումը Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին կայացրած որոշումը դադարեցնելու վերաբերյալ համապատասխան որոշում:

4. Պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/111» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել Ընկերության հայտը բավարար գնահատելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**